

ՊԱՏԱՐԱՔԱՆԱԽՐԱԿԱՆ

ՎԱԶԳԵՆ ՆԱՄԱԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ԲԱՌ-ԳԻՐՔ ՆԱՅՈՑԻ» ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցում» կան այնպիսի բառեր, որոնք բառաքնական և ստուգաբանական հետազոտության փնտանկյունից որոշակի դժվարություններ են հարուցում: Այդ բառարանին այս կամ այն նպատակով անդրադարձել են ոչ միայն բանասեր ուսումնասիրողները, այլև լեզվաբանները:

ՆԱՃառյանի գնահատությունը, մեղմ ասած, բավականին մերժողական է, և այդուհանդերձ նա «Բառգիրք հայոցի» բառամթերքը գրեթե ամբողջովին անցկացնում է իր բառարանի մեջ, միշտ նշելով՝ «գիրք միայն Բառ. երևմ. [=Բառգիրք Երևմիայի]» կամ «ունի միայն Բառ. երևմ.» և այլն:

Գ. Զահուկյանը գտնում է, որ «Միջնադարյան Նայասարանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է փայլա հայոց լեզվի պարմությանը և ստուգաբանությանը: Այս փնտանկյունից Ն. Ամալյանի «Միջնադարյան Նայասարանի բառարանագրական հուշարձանները» (Երևան, 1974) աշխատության, և ապա «Բառգիրք հայոցի» քննական բնագրի հրապարակության (Երևան, 1975) նշանակությունը շար կարևոր է: Կարելի է ասել, որ ՆԱՃառյանի «Նայերեն արմարական բառարանը» մեծապես շահած կլիներ, եթե նման աշխատանք կատարված լիներ նախքան այդ բառարանի (նկարի ունի «Բառգիրք հայոցի» քննական բնագիրը, Երևան, 1975.- Վ.Ն.) հրապարակումը. շար բառեր կճշգրտվեին և կստանային ավելի հավաստի մեկնաբանություն»¹: Եւ իրոք, հետագա բառաքնական աշխատանքները ցույց տվեցին, որ «Բառգիրք հայոցը» կարևոր ձեռքբերում է հայերենի բառապաշարի ամբողջական վերհանման - նկարագրության համար :

«Բառգիրքը», ստեղծվելով Էջմիածնի հոգևոր միջավայրում, լինելով պարզագույն կառուցվածքի բացառական բառարան, ինչ խոսք, ԺԷ դ. հայ բառարանագրության ամենակարևոր երևույթն է²: Այն ամփոփում է զգալի թվով ձեռագիր բառարանների նյութը՝ մի քանի հազարի հասնող բառաքանակի սահմաններում: Այն ժամանակին բարձր են գնա-

1 Գ. Զահուկյան, Ստուգաբանություններ. «Լրաբեր հասարակական գիտությունների» (ԼՏԳ), 1976, թ. 12, էջ 41:

2 «Բառգիրք հայոց», արարեալ ի Սուրբ Էջմիածին Երևմիայ վարդապետ ի յԱլիկոնայ, 1698, 344 էջ, (2-րդ փպ.՝ Կ.Պոլիս, 1828, 576 էջ):

հարել, օրինակ, Մխիթարյան միաբանության հայրերը, ամենից առաջ՝ Մխիթար աբբա Սեբաստացին, երբ ձեռնամուխ էր լինում իր ծավալով անհամեմատ մեծ, բառարանային մշակման փասանկյունից ընդգրկում, ժամանակի երոպական բառարանագրության չափանիշներին համապատասխան բառարանի սյունդմանը³։ Այս բառարանի նյութին փոքրեր առիթներով, այս կամ այն չափով անդրադարձել են նաև Գ.Ղափանցյանը և Է.Աղայանը⁴։

Նկարագրությունը մեծացավ հարկապես հեղափոխում, երբ լույս տեսավ «Բառգիրք հայոցի» քննական բնագիրը։

Այդ գործում մեծ ներդրում ունի Ն. Ամալյանը։ Անվանի լեզվաբան-բառարանագետը նախ՝ գրեց հայ բառարանագրական հուշարձանների պատմությանը նվիրված հարուկ աշխատություն, որում անդրադարձավ նաև հիշյալ բառարանի գիտական վերլուծությանն ու գնահատությանը, այնուհետև՝ կազմեց վերջինիս քննական բնագիրը՝ ծանոթագրություններով և ընդարձակ առաջաբանով, որը մեծ ձեռքբերում է այդ ասպարեզում⁵։

«Բառգիրք հայոցի» զգալի թվով բառեր ուշադրության առարկա են եղել Գ. Զահուկյանի «Ստուգաբանություններ» վերնագրով հոդվածներում, այլև հեղափոխականություններից մի քանիսում⁶։ Բառարանի մեկ-երկու բառերի անդրադարձել է նաև Պ.Բեղիկյանը⁷։ Լ. Նովիանիսյանը քննության է առել «Բառգրքի» անհայտ ծագման երկու փասնակից ավելի բառեր⁸։ Լույս են տեսել նաև փողերիս հեղինակի աշխատանքները⁹։

Այսուհանդերձ, բառարանում դեռևս կան բառեր, որոնք մնում են չլուսաբանված։ Ստորև անդրադառնում ենք դրանցից մի քանիսին։

1. *Անկար* բառի համար Ն.Աճառյանը «Արմատականում» նշում է. «*Անկար* «ապրայ, կշորդ», մեկ անգամ ունի Բառ. Երեմ, էջ 237՝ հեղեղյալ ձևով. «նիժար և նժար. կշորդ, փարսանկ, ապրայ, անկար»։ Այնուհետև, ավելացնում է, որ այն հանդիպում է Վանի բարբառում՝ «ապրա» իմաստով (Աճառյան 191, էջ 211)։ «Բառգրքի» քննական բնագրում առանձին բառահոդված են՝ *նժար* «կշորդ, լուծ Ժ կշորդն է» և *նիժար* «և նժար. կշորդ, փարսանկ, ապրայ, անկար» («Բառգիրք» 1975, էջ 241)։ Գ. Զահուկյանը բառին անդրա-

3 «Բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, հի. 1-2, 1749-1769։

4 Գ. Ա. Կապանյան. Общие элементы между хеттским и армянским языками. Эриван, 1936, **Он же**. Историко-лингвистические работы: К начальной истории армян. Древняя Малая Азия, Ереван, 1956, *сс.* 329 - 408: **Նույնի**՝ Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961: **Է. Աղայան**, Բառարանական և ստուգաբանական հեղափոխություններ, Երևան, 1974։

5 Տե՛ս Ն. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI- XVIII դդ.), Երևան, 1972: «Բառգիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ն. Ամալյանի, Երևան, 1975: Տե՛ս նաև **Նույնի**՝ Հայ բառարանագրության պատմությունը, Երևան, 2007։

6 Գ. Զահուկյան, Ստուգաբանություններ. - «Պարմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՏ), 1965, թ. 1, էջ 255, 1991, թ. 2, էջ 36-44, 1996, թ. 1-2, էջ 39-46, ԼՏԳ, 1976, թ. 2, էջ 41-51, 1979, թ. 3, էջ 23-34: **Նույնի**՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987: **Նույնի**՝ Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010։

7 Պ. Բեղիկյան, Ստուգաբանական վերլուծություններ. «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1956, թ. 7, էջ 40: **Նույնի**՝ Մի քանի ստուգաբանություններ, ՊԲՏ, 1962, թ. 1, էջ 144։

8 Լ. Նովիանիսյան, Բառարանական նկարագրումներ «Բառգիրք հայոց»-ի մեջ փոքր զգալի մի քանի բառերի վերաբերյալ, ՊԲՏ, 2010, թ., էջ 213-221։

9 Վ. Նամբարձումյան, Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» մի քանի բառի մեկնություն. «Զահուկյանական ընթերցումներ», Երևան, 2010, էջ 152-168: **Նույնի**՝ Բառարանական դիտարկումներ Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» մի քանի բառերի շուրջ, ՊԲՏ, 2010, թ. 3, էջ 161-169։

դառնում է հեյրեյալ կերպ. «Անտար «արբա. կշորդ» (ԲՆ): Ծագումն անհայտ է» (Ջահուկյան 2010, էջ 62):

Նայրնի է, որ լծով կշորքի երկու նժարները («թաթերը») իրար հակոպնյա են (իմա՝ մի նժարին կշորաբար, մյուսին՝ կշորի ապրանք, որոնք հակակշորում են իրար՝ հավասարվելու ասարիճանի): Ուստի *անտար*-ը, իբրև *արբա* (արբա. 'abra «պարա»?) կամ կշորդ, ավելալացվում է կշորաբարին՝ ապրաբին հակակշիռ, հակառակ¹⁰: Ըստ այսմ կարելի է ենթադրել, որ *անտար* բառը փոխառություն է հուն. ἀντάραι (ապառնի անց. ἀντέρομαι-ի, ապառնին՝ ἀντερῶ, առիսար՝ ἀντερόμην, հուն. ἀντερόμην) «դիմադրելը՝ դիմադրում. հեյ մդելը՝ հեյ մդում» (այսպիսով՝ «հակակշորելը՝ հակակշորում»):

Ավելացնենք, որ *անտար* բառի բացառություն մեջ բերվում է նաև *փարսանկ* բառը, որը չենք գտնում, օրինակ, Աճառյանի «Արմավրականում», Ջահուկյանի «Մոռագարանական բառարանում», թեև կա Մալխասյանցի բառարանում՝ *փարսանկ* ձևով, որպես էլ նշվում է, որ այն ունի «բար, որ դնում են կշորքի թեթև կշոր թաթի մեջ՝ հավասարակշորելու համար» իմաստը (Մալխասյանց 1945, էջ 492): Սա, իր հերթին, միանգամայն հավասարի է դարձնում մեր ենթադրությունը *անտար* բառի՝ հունարենից փոխառությունը լինելու առումով:

2. *Բուդարար* «մաքանի, կնքոց» բառի դեպքում բնական բնագրի փողպակին բերվում է *բուխարար* փարբերակը, իսկ ծանոթագրության մեջ նշվում է հեյրեյալը. «Ձեռագրերը մեծ մասամբ ունեն *բուդարար*» (NN 8198, 7149, 2335 և այլն), ապա *բուդարար* (N 5596) և այլ ձևեր, բայց ոչ *բուխարար*: Նման. Արմ., *Բուխարար*» («Բառգիրք» 1975, էջ 59, 355): Ներագայում Ամալյանն այս ծանոթագրությունը վերանայում է հեյրեյալ կերպ. «*Բուխարար*. մաքանի կամ կնքոց: Ձեռագրերը մեծ մասամբ ունեն *բուդարար*» (NN 2335, 4149, 8198 և այլն), ապա *բուդարար* (N 5596) և այլ ձևեր, բայց ոչ *բուխարար*» (Ամալյան 2010, էջ 188):

Ն. Աճառյանը «Արմավրականում» գրում է. «*Բուխարար* «մաքանի կամ կնքոց». ունի միայն Բառ. երևմ. էջ 57» (Աճառյան 1971, էջ 481): Գ.Ջահուկյանը նշում է բոլորովին այլ կերպ. «*Բուդարար (բուխարար)* «մաքանի» կամ «կնքոց»(ԲՆ): Ծագումն անհայտ է» (Ջահուկյան 2010, էջ 2010, 138)¹¹:

Ելնելով բառի իմաստից՝ «մաքանի, կնքոց», առանձնացնում ենք *բուդ* (**բու*) բաղադրիչը, որը հայերենում փոխառություն է լատ. bulla «կնիք» բառի: Վերջինիս ուղիղ բացառությունը քվել են «Նոր հայկազյան բառարանի» հեղինակները՝ այն դիտարկելով ոչ միայն առանձին, այլև *վու* ձևի փարբերակ «կոնդակ» նշանակությամբ. «Երևոցա բազում շնորհս, զորս *բուլն* պապին ցուցանե» (ՆՏԲ 1, էջ 511): Իսկ *վու* փարբերակի դեպքում նշում են՝ լատ. bulla, որից հուն. βούλλα, βούλλη, իտալ. bollo // bolla «պալար՝ որպես գաղաջակ. ուստի նմանությամբ՝ ճարմանդ, շինգո, և նշխար կնքոյ. կնիք, կոնդակ». «Եւ գայլ երկիրն

10 Ի դեպ՝ *սարայ* բառը Մեղրեցին բացառում է ոչ թե «աման, պարա», այլ «կշորաբարին լրացուցիչ դրվող ինչ-որ առարկա՝ կշիռը հավասարեցնելու համար», որը Աճառյանը նշում է այլ՝ «պարա, աման» իմաստով, ընդ որում նույնը վերագրելով արաբ 'abra բառին: Թյուրիմացությունը հավանաբար գալիս է Նորայր Բուզանդացու բառարանից (տե՛ս Աճառյան 1971, էջ 243):

11 *Բուդարար* ձևը, հավանաբար, փաղաքական վրիպակ է, որովհետև նման փարբերակ չի նշվում բնական բնագրում՝ առհասարակ:

գոր կալեալ, ոսկի *վուրով* նմա շնորհեալ»։ «Առաքեաց գնամակն իւր պապական՝ դրոշմեալ *վուրով*ն առաքելական» (ՆՏԲ 2, էջ 830)։ Նկարագայում այն ընդունվել է Ն. Նյութմանի, ուսարի նաև Աճառյանի, ապա Զահուկյանի կողմից (տե՛ս վերը)։

Մաքրանիով կնիք դնելը, կնիք-մաքրանի գործածելը բավականին փարածված է եղել հին աշխարհում և միջնադարում, այնպես որ *բողաքար* բառի «մաքրանի, կնիք» բացատրությունը պարահական չէ։

Նկարի ունեռալով լար. *bulka* «կնիք (կնքված վավերագիր՝ վկայագիր, պապական կնիքակ)» (հայ. *բուլ/վուլ*) բառարմարի նախնական իմաստը՝ «ջրի պղպջակ» (այնուհետև «կոճակ», ավելի ուշ «ոսկի կոճակ, որ զանազան բաների վրա իբրև նշան էին գործածում»)¹², կարծում ենք, որ այն ծագում է հն. *b^(h)el-/b^(h)ol- «վիզել, ուղղնել» արմարից, որից ունենք հայ. *պարար, պղպջակ* և այլն (տե՛ս Աճառյան 1979, էջ 4-5, 90-91, Զահուկյան 2010, էջ 615, 640), որոնցով նշանակված են հայերենին անցած *բուլ* կամ *վուլ* բառերը։ Առայժմ անբացատրելի է մնում *բողաքար* բառի մյուս բաղադրիչը (*բար*?)։

3. *Գամ* «անգամ, ժամ» («Բառգիրք» 1975, էջ 62)։ Այս բացատրությունը հեղափոխում մնացել է մեկուսի, ավելին՝ շրջանցվել է «Նոր հայկազյան բառարանի» նկատառումը, թերևս այն պարզառով, որ այն նշվում է *գամ* «անցք, դէպք, ելք, հնարք և այլն» բառին հարակից, ենթադրաբար՝ «դեպք ժամանակի, այսինքն՝ անգամ, նուագ, հաղ» («Նոր բառգիրք հայկազյան լեզուի», 1836, էջ 526, 2-րդ սյունակ)։

Թերացումը գալիս է Ն. Նյութմանից։ Ն. Աճառյանը և Գ. Զահուկյանը չունեն *գամ* «անգամ, ժամ» բառը, իսկ *անգամ*-ը և *ժամ*-ը, ընդ որում ոչ անկախ Նյութմանից, դիպում են իբրև իրանական փոխառություն. *անգամ* ~ իրան. *hangām* «ժամանակ, միջոց, փարվա եղանակ», *angām* «նույնը», վերջին ձևը՝ ըստ Աճառյանի «չէ յիշած Նյութման, առելի ուղիղ է ներկայացնում մեր բառը» (Աճառյան 1971, էջ 182-186, հմմտ. Զահուկյան 2010, էջ 52), *ժամ* ~ իրան. *žamān* «ժամ, ժամանակ», որն ըստ Զահուկյանի «առանձնացված է իրանական *žamān* ձևից -ān և հայ. -ան ածանցների բաղադրված» (Աճառյան 1971, էջ 221-224, հմմտ. Զահուկյան 2010, էջ 279)¹³։

Կարելի է կարծել, որ հայ. *գամ* և *ժամ* (այլև *ժուռ* «անգամ, հեղ». հմմտ. օրը երկու ժուռ ուրել «օրը երկու անգամ ուրել» - Ազուլիս, Ալաշկերտ, Երևան և այլն, *ժուկ* «ժամանակ». հմմտ. *ժուկով-ժամանակով* «մի ժամանակ») բառերը բնիկ են, ունեն իմաստային ընդհանրություն, հանդես են գալիս *գ/ժ* փաթեթակվածությամբ (հմմտ. *գ/ջ, թ/չ* փաթեթակում. *գայլ ~ գել/ջեկ, քոյր ~ քիրա, մոքիր // չիրա, մոջիր* - Աշտարակ, Նորադուգ և այլն), իսկ *ջ*-ի փոխարեն *ժ*-ն, հավանաբար, իրանականի հետ բաղադրված արդյունք է։

4. *Դնոց* և *պարզարակ* կապակցությունը բառարանում բերվում է իբրև գլխաբառ, որը բացատրվում է «մահիճ, դափռի» («Բառգիրք» 1975, էջ 81)։ Ամալյանը քննական բնագրի փողարակին նշում է, որ ձեռագրերից մեկն ունի «դնոք. դափռ (այս բառառիվածից հետո՝ դշալ. դադրել կամ հանգչել)», մյուսը՝ միայն «դնոք», մեկ ուրիշը՝ «դնոք. պարզարակ,

¹² Տե՛ս **И. Х. Дворецкий**, Латинско-русский словарь, М., 1976, էջ 138-139: Նմմտ. Աճառյան 1971, էջ 480:

¹³ **Լ. Նովիանիսյանը** հավանական է համարում հայ. *ժամ*-ը կապել հայ. *գամ* «ամանակ, ժամանակ. փարի» ձևի հետ։ Տե՛ս **Լ. Նովիանիսյան**, Նայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1991:

մահիճ, դափռի» (նաև՝ դնոր եւ պարգարակ, մահիճ, դափռի»), եւս մեկ ուրիշը՝ «դնոր, պարգարակ, մահիճ...» (նույն տեղում): Իսկ ծանոթագրությունների բաժնում ավելացվում է, որ «մյուս գրեթե բոլոր ձեռագրերում՝ *դնոց* կամ *դնոցք*» (նույն տեղում, էջ 361): Սակայն հետագայում այդ բառահոդվածին անդրադառնում է հետևյալ կերպ. «*Դնոր*, պարգարակ, մահիճ, դափռի: Բոլոր ձեռագրերում, բացի NN 1495n 3199 7 6568-ից, գլխաբառը *դնոց* կամ *դնոցք* է, որը եւ ճիշդ է» (Ամալյան 2007, էջ 200):

Աճառյանն ունի՝ «*դնոր* «պարգարակ կամ մահիճ կամ դափռի» (!), այսպես ունի Բառ. երևմ, էջ 79» (Աճառյան 1971, էջ 676): Ջահուկյանը նույնպես գլխաբառ է դիպում *դնոր*-ը. «*Դնոր* «պարգարակ, մահիճ, դափռի» (!): Կեղծ բառ՝ ստացված *դնոց* ձևի աղավաղմամբ:

Այսու հանդերձ, կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում գործ ունենք -որ գոյականա-կերպ ածանցով կազմության հետք՝ *դնեւ* բայի *դն-* (*դին-*) արմարից (հմմտ. *քեկոր*, *կրոր*, *հսարոր* եւ այլն): Մյուս կողմից՝ նույն արմարի հիման վրա -*ոց* ածանցով կազմություն է *դնոց*-ը (հմմտ. *այրոց*, *թիկնոց*, *խայթոց*, *ծակոց*, *սփոռոց*, *քորոց* եւ այլն)¹⁴:

Բառի բացարարության մեջ հանդիպում է նաև *դափռիս* բառը, որն, անշուշտ, իմաստով մոտ պիտի լինի *դնոր/դնոց* բառին (երև ալն աղավաղյալ մի ձև չէ), իսկ թե ինչ ծագում ունի, մնում է բացահայտելի:

«Արմարական բառարանում» նշվում է. «*Դափռիս* «մահիճ կամ պարգարակ», ունի միայն Բառ. երևմ. 79 *դնոր* բառի բացարարության մեջ» (Աճառյան 1971, էջ 643): Գրեթե նույն մեկնությունն ունի Գ.Ջահուկյանը. «*Դափռիս (դափռոց)* «մահիճ, պարգարակ» (ԲՆ): Անստույգ բառ: Ծագումն անհայտ է» (Ջահուկյան 2010, 190): Ի դեպ՝ Ջահուկյանը փակագծում տալիս է նաև *դափռոց* տարբերակը՝ թերևս ի նկատի ունենալով Մեղրեցու բառարանի գրչագրերից մեկում առկա ձևը: Իսկ սա կարող է հիմք հանդիսանալ ենթադրելու, որ տվյալ դեպքում գործ ունենք *դափ* (ուղղելի՝ *դափ* «գերին, հարթ տեղ եւ այլն»?) բառից -*ոց* դերբայական մասնիկով կազմության հետք, այսինքն՝ «պանելու՝ տանող մի սարք՝ հարմարանք, պարգարակ», ոչ թե *դա-* (անհասկանալի բաղադրիչ) *եւ փռիս(եւ)* «տեղաշարժել, տեղափոխել» բայարմարի միացման հետք:

Այսպիսով, *դափռիս* (ավելի ստույգ՝ *դափռոց*) բառի ծագումը, անկախ իմաստի հավաստիությունից, մնում է սոսկ ենթադրության սահմաններում:

5. *Ընթարց* «նախդիր, որ գտնականն պահանջէ առանց» («Բառգիրք» 1975, էջ 112): Բառը չենք գտնում «Նոր հայկագյան բառարանում» (հ. 1, 1836, էջ 776), այլև Աճառյանի «Արմարական բառարանում», ընդ սմին ոչ միայն որպես այդպիսին, այլև *թարց* արմարի տակ՝ իբրև ենթադրելի *ըն-թարց* տիպի բաղադրություն: Ուստի այն դուրս է մնացել նաև Գ.Ջահուկյանի բառարանից (Աճառյան 1973, էջ. 126, 162, Ջահուկյան 2010, էջ 248):

Աճառյանը *թարց* «առանց, բացի, զար» արմարի մասին նշում է, որ «թարց վերցնում է սեռական հոլով», որ այն է, ինչ կա «Բառգրքի» բացարարության մեջ: Նա բերում է նաև Մեղրեցու բառարանում առկա *թարցել* «առանցել» բայը՝ բաղադրված *թարց*-ից. «Բառգր-

¹⁴ Հմմտ. Մ. Էրոյան, Աճառյանը ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 235: Մ. Գալստյան, Աճառյանը եւ աճառյանը ժամանակակից հայերենում, Երևան, 1978 : Վ. Դ. Առաքելյան, Ա. Ն. Խաչատրյան, Մ.Ա.Էրոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1 (Նշյունաբանություն եւ բառագիտություն), Երևան, 1979, էջ 479:

քի» քննական բնագրում նշվում է նաև 9-ի փոխարեն 8-ով ձեռագրական տարբերակ («թար- ձել - առանձել»), որը բնավ չի խանգարում ճիշտ ձևը *թարց*-ը դիտարկել:

Կարծում ենք, որ *ընթարց* բառը բաղադրված է *ըն* լատինաբան նախածանցիկով և *թարց* բառով, որ նախադրություն է: Եւ թանի որ այս *ըն* մասնիկը գործածվում էր սե- ռական-տրականի հետ՝ կազմելու ներգոյական հոլովի ձև, ուստի *ընթարց*-ը բնագրային (կոնսերվատիվ) մի ձև է, որ «Բառգրքում» հանդես է եկել իբրև բառարանային միավոր (բառահոլովածի գլխաբան)՝ ունենալով իր ուրույն բացատրությունը:

6. *Լեղեալ* «լքալ, ձանձրացալ» բառը Մեղրեցու «Բառգիրք հայոցի» որոշ ձեռագրե- րում *լեղդեալ* «լերդացած» տարբերակով է, իսկ քննական բնագրի ծանոթագրության մեջ նշվում է, որ ձեռագրերի մեծ մասում *լեղեալ* է, որն ապացուցվում է նաև մյուս ձեռագրերում «*լեթեյոց*, լեթոց, ձանձրացեյոց» կամ «*լեթել*, լթել, ձանձրանալ» ձևով լինելու հանգաման- քով («Բառգիրք» 1975, էջ 133, 377): Նկարագրում Ամալյանը այլ կերպ է մեկնաբանում սույն բառահոլովածը. «*Լեղդեալ*, լթեալ, կամ ձանձրացեալ: Գլխաբանը սխալ է, պետք է լինի *լեղեալ*, ինչպես NN 451, 533, 535 և բազմաթիվ այլ ձեռագրերում: Որ գլխաբանի ճիշտ ձևը *լեղեալ* է, հաստատվում են նաև N 5126 և N 8456 ձեռագրերը, որոնք ունեն՝ «*Լեթեյոց*, լթեյոց, կամ ձանձրացեյոց» բառահոլովածը, իսկ N 534-ում՝ «*Լեթել*, լթել, կամ ձանձրանալ»: Ծար ձեռագրերում (NN 533, 545, 3468 և այլն) *լթեալ*-ի փոխարեն *թուլացեալ* է» (Ամալյան 2010, էջ 229)¹⁵:

Աճառյանը *լեղեալ*-ը համարել է սխալագրություն, ուստի բառարանում դնում է *լեղ- դեալ* ձևը. «*Լեղդեալ* «լթեալ կամ ձանձրացեալ», ունի միայն Բառ. երևմ. էջ 132» (Աճառ- յան 1973, էջ 277): Սա ոչ ճիշտ սրբագրում է, եթե հաշվի ենք առնում թե՛ բառի իմաստը և թե՛ ձեռագրերի մեծ մասի տվյալները: Ջահուկյանը եւս դնում է *լեղդեալ* «լթեալ կամ ձանձրա- ցեալ»՝ ոչ անկախ Աճառյանից և ըստ «Բառգիրք հայոցի», իսկ շարունակության մեջ գրում է հետևյալը. «Վերջինիս նոր հրատարակության մեջ ուղղված է *լեղեալ*, որը նույնացված է *լեթեալ* ձևի հետ, այսպիսով առկա է *լեթիլ* բայի դերբայացումը» (Ջահուկյան 2010, էջ 295): Ըստ այսմ հարցի լուծումը մնում է երկակիության մեջ:

Մալխասյանցն ունի ոչ միայն բարբառային (կամ խոսակցական) *լեթել* «թուլանալ, տրտմանալ, լքվել», այլև *լեթվել* «1. շար ուրելուց զզվել, տրտմանալ, 2. երես առնել, լրբանալ, 3. երկար տևել ու չլուսանալ (վերքի մասին)» բառերը (Մալխասյանց 1944, էջ 192): Այսպես որքան էլ առանձին են դիտվում *լեթել* և *լեթվել* չեզոք սեռի բայերը, դրանց ամենընդհանուր իմաստն է «թուլանալ, լքվել, ձանձրանալ»: Ուստի կարելի է ենթադրել, որ այն փոխառյալ լատ. *letāre* «վնասել, սպանել, մեղցնել, ճնշել» բայն է, որը գործածվել է լա- տինաբան հայերենում, և «Բառգիրք հայոցում» տրվել է գրել ինքնաբերաբար: Ընդ որում հայերեն գրավոր աղբյուրներում այն նշվում է *ledēre* («վնասել») ձևով¹⁶:

15 Ամալյանը քննական բնագրի ծանոթագրության մեջ հղում է Աճառյանի «Արմատական բառարանին» և Սյր.Մալխասյանցի «Նայերեն բացատրական բառարանին», իսկ հետագայում՝ միայն վերջինին, ընդ որում նշելով, որ առաջինն ունի *լեղդեալ*, իսկ երկրորդը՝ *լեթել*:

16 Նճմար. «Բազմալեզ», 1873, թ. 1, էջ 323: Գ. Զարրիանալեան, Պարմություն հայ էին դպրութեանց, հ. Բ. Նոր մարենագրություն, Վենետիկ, 1878, էջ 53: Ն. Աճառյան, Նայոց լեզվի պարմություն, II մաս, Երևան, 1951, էջ 323: Վ. Գ. Նամբարձումյան, Լատինաբան հայերենի պարմություն (14-18-րդ դդ.), Երևան, 2010, էջ 149 (լատիներեն բառը տարածված է վրիպակով):

7. *Խեղ* «հեշտ», բերվում է նաև գրչագրական մեկ տարբերակ. «հեշ, փխ. հեշտ», վերջում՝ ծանոթագրվում է հերեյայ կերպ. «Նմմ. Արմ.» (Խմա՝ Աճառյանի «Արմարական բառարան» - Վ.Ն.) («Բառգիրք» 1975, էջ 142, 379): Իսկ հերագայում այս բառին անդրադառնալիս Ամալյանը գրում է. «Խեղ. հեշ: Մեկնությունը պետք է լինի «հեշտ»» (Ամալյան 2010, էջ 232): Ըստ «Արմարական բառարանի»՝ «*Խեղ* «հեզ», ունի միայն Բառ. երևմ. էջ 140. Ի՛նչ լինելը յայտնի չէ» (Աճառյան 1973, էջ 355): Ջահուկյանը գրում է. «*Խեղ* «հեշտ» (ԲՆ, այլ ձև. «հեզ», որից Աճ. ՆԱԲ 2, 355): Ծագումն անհայտ է» (Ջահուկյան 2010, էջ 325)

Նակված ենք ընդունելու, որ Ամալյանի վերջին մեկնաբանությունը միակ հավասարին է, ուստի սխալ կամ վրիպակ պետք է համարել «հեզ» իմաստով բացատրությունը: Այնուհետև, ձեռագրական տարբերակներ են *հեշ/հեշտ* բառերը, որոնք բոլորովին այլ իմաստ ունեն՝ «արթնացում, սթափեցում, ուշադրության հրավիրում մի բանի վրա», որն էլ, հավանաբար, ունենք բաղադրյալին *հեշար, հեշալ* թանալ «ուշքի գալ, զգաստանալ» (Մոկս, Մուշ, Սասուն, Վան և այլն) , այլև *հուշտ (հուշտ անել* «խորնեցնել», *հուշտ լինել* «խորնել») (Արարաբյան, Թ-բիլիսի, Ղարաբաղ, Կարին) բառերում՝ անկախ արմատի բնիկ կամ փոխառյալ լինելուց¹⁷:

Նման հիմք տալիս է մի կողմից՝ բառի «հեշ» կամ «հեշտ» իմաստը, որը կա հայերենի բարբառներում, մյուս կողմից այն նկատառումը, որ *խեղ(ք)* բառը լեզվի գրական տարբերակում իմաստով ամրակայվել է իմացական կողմի վրա՝ հեռանալով նախնականից, սկզբնականից, որը զգացական է՝ «զգաստ՝ արթուն լինելը, զգաստանալը՝ արթնանալը, ուշքը վրան պահելը. սթափ լինելը և այլն»: Ըստ այսմ *խեղ* բառը, հավանաբար, սկզբնապես նշանակել է «զգաստ, արթուն, ուշքը տեղը», որ «Բառգրքում» մեկնվում է «հեշ»/«հեշտ» բառիմաստով:

8. *Խշեղ* «ղաղարել» բառը չունի գրչագրական որևէ տարբերակ, իսկ քննական բնագրի ծանոթագրությունների բաժնում նշվում է հերեյայով. «Ձեռագրերը մեկնում են նաև «յանկողին հանգչել» (N 3468), «ղաղարել, կամ հանգչել» (N N 533, 545, 8606 և այլն), «հանգչել» (N 540) («Բառգիրք հայոց» 1975, էջ 144, 380): Ամալյանը նույնը տալիս է նաև հերագա աշխատության մեջ (Ամալյան 2010, էջ 233):

Ըստ «Արմարական բառարանի»՝ «*խշեղ* «ղաղարիլ», ունի միայն Բառ. երևմ. էջ 142 (Աճառյան 1973, էջ 381), իսկ «Ստուգաբանական բառարանում» նշվում է. «*խշեղ* «ղաղար առնել, (անկողնում) հանգստանալ» (ԲՆ): Կապ ունի՞ արդյոք *խշտ* «անկողին» բառի հետ (Ջահուկյան 2010, էջ 336):

Ջահուկյանի հարցադրումը տեղին է, որովհետև հիմնավորվում է ոչ միայն, ինչպես ինքն է գրում, «խիշտ «անկողին» (*«հանգստավայր». *խշտիք* «խղճուկ անկողին», *խշտել* «հանգիստ տալ, օթևանել») - իսկ. ¹⁸heštiā-, ¹⁹hešti- (կամ ²⁰hištiā-, ²¹hišti-. - Վ.Ն.) «ղամբարան» (?) գուգահեռի անցկացմամբ (Ջահուկյան 1987, էջ 314)¹⁸, այլև թերևս այն ավելի հիմնավոր դարձնող ոչ միայն լուվ. *hi-šhiša-* «կապել, առնել», հինդ. *վժիhati* «կանգնած է», ավեստ. *hi-štaiti* «կանգնած է, դրված է», հուն. *ἵστᾶμι* «դնում եմ», լատ. *si-stō* «դնում եմ», հիթ. *-si-*

17 Տե՛ս Նայոց լեզվի բաղադրյալին բառարան, Կ. Գ., Երևան, 2004, էջ 272, 314:

18 Ջահուկյանի գրքում ¹⁸hešti- է, փոխ. ¹⁹hešti-, այն է՝ երկար ձայնավորմամբ *i*:

ssiur «ինձ պահում եմ» ձևերի հավելմամբ, որով ավելի է փաստարկվում ենթադրությունը¹⁹: Յեղակից լեզուների հիշյալ ձևերը բխեցվում են հե. *s/[h]ist[h]aH- արմարից, թերևս նաև հայ. *խշ-//խշտ-* արմարից կազմված *խշեի, խշտեի, խշտի* (հմմտ. *գեպնախշտի* «գեպնին պառկած») և այլ ձևերը:

Ի լրացումն ասվածի նկատենք նաև, որ ունենք բրբռ. *խռշտ* «ցցուն, ցցված, հպարտ, գոռոզ» բառը (Մուշ, Ալաշկերտ և այլն), որ չենք գտնում հայերեն բարբառային բառարաններում: Մյուս կողմից՝ հայերենում «ղամբարան, գերեզման» իմաստն արտահայտվում է նաև «հանգստարան» (հմմտ. *աստ հանգչի* «այսպեղ հանգչում է՝ թաղված է») բառով, որն էլ *խշեի* բառի բովանդակության պլանում լրացուցիչ տարր է մտնում:

Ուստի կարելի է մտածել, որ տարբերակային արմար են *խշ-//խշտ-* ձևերը, որոնք գուցա հենարան ունեն հնդեվրոպական մյուս լեզուներում, ընդ որում *տ-*ով և առանց *տ-*ի:

9. *Կալոն* բառն ըստ «Արմարական բառարանի» նշանակում է «սեղեխ, հոմանի», որն էլ մեկնաբանվում է հեպտելյա կերպ. «նորագիտ բառ, որ մեկ անգամ գտնում եմ գործածում Բառ. երևմ. էջ 285 *սեղեխ* բառի բացատրության մեջ. բայց նույն բառը՝ էջ 283 գրում է *սեղեխ* «հոմանի կամ տրոն» (ա. տպագրություն *տրոն*, բ. տպագրություն *ալոն*). սրանով բառի ձևը անստորոգ է մնում» (Աճառյան 1973, էջ 486): Իսկ «Ստուգաբանական բառարանում» նշվում է հեպտելյալը. «*Կալոն*. տրոն տրոն», այլև «*Տլոն* «հոմանի, սիրեկան»: Ծագումն անհայտ է» (Ջահուկյան 2010, էջ 373, 730):

Նախ, նկատենք, որ «Բառգրքի» քննական բնագրում չկա *կալոն*, ոչ էլ *տրոն* գլխաբառով հոդված, այն չի հանդիպում նաև *հոմանի, սեղեխ* բառերի բացատրության մեջ, որոնց դեպքում ձեռագրական տարբերակներ չեն նշվում կամ ծանոթագրություններում մեկնաբանում սրանում (տրոն «Բառգրք» 1975, էջ 155, 188, 286, 397): Ավելին, ունի լոկ *սեղեխ*, որ բացատրվում է ոչ թե նախ *կալոն* բառով, այլ միայն «հոմանի, տրոն» բառերով: Մնում է հիմք ընդունել Աճառյանի փոխալը *կալոն* բառի վերաբերյալ, մանավանդ որ նա օգտվել է «Բառգրքի» հին հրատարակություններից (Ալիկոնա, 1698, Կ.Պոլիս, 1729):

Այնուհետև, հակված ենք կարծելու, որ *կալոն* և *սեղեխ* բառերն այլ բան չեն, քան միևնույն արմարի տարբերակներ՝ *կալ-//սեղ-* (հնչյունական երեք կարգի տարբերակվածությամբ), ծագում են հե. *k(h)-l̥-e(s)- արմարից. հմմտ. իսթ. *kalleš* «կանչել, ձայնել», հուն. *κἄλέω* «կանչել, ձայն տալ, անվանել»²⁰: Ընդ որում բառը կրել է իմաստային ակնհայտ փոփոխություն (զարգացում)՝ սոցիալական որոշակի պայմանականությամբ:

10. *Կոնդ* «գերեզման» բառի ձեռագրական տարբերակներ են՝ «կոնտ, այլև կոնթ, փոխանակ՝ կոնդ» («Բառգրք» 1975, էջ 170):

Ըստ «Արմարական բառարանի»՝ «*Կոնդ*, ի հոլ. «գերեզման». ունի միայն Բառ. երևմ. էջ 167, որից առնում է նաև ՓԲ յառել (=Փեշրմալճյանի բառարան, Յառելում. - Վ.Ն.) , այլև կապվում է համանուն «անդամարյծ» բառի հետ, որն հիմնավորվում է նրանով, թե փոխաբերաբար «կոճղը ըմբռնուելով կոնտ ու կոշտ մի բան, անցել է «կոյտ» իմաստին, որից էլ «զլուխ. 2. բարձրություն, 3. թումբ, դար, բլուր «նշանակությանց...Այս վերջինը արդեն

19 Նմմտ. Գ. Գամկրելիզե, Բյաչ. Վ. Իվանով, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, т. 1, М., 1984, էջ 220:

20 Նմմտ. Գ. Գամկրելիզե, Բյաչ. Վ. Իվանով, նշվ. շխ., էջ 202:

նույն է «գերեզման» նշանակության հետ» (Աճառյան, 1973, էջ 632): Դժվար չէ նկատել, որ այսպիսի ունենք բավականին մանվածապար, իմաստի անցման առումով գրեթե անհնարին բացառությունների հետ, ուստի այն մերժելի է, քանի որ կարելի է այլ բացառություն առաջարկել:

Այնուհետև, Աճառյանը նույն բառահոգովածում օրինակ է բերում բարբառներում *կոնդ* բառի «բլուր» (Երևան, Կաղզվան) նշանակելը՝ հղելով նաև Մեղրեցու սույն «Բառգրքում» *բլուր* բառի «կոնդ, փոքր լեռան, հողակոյար» բացառությունը: Վերջինս նույնպես հիմնավոր չէ, որովհետև նախ՝ *բլուր*-ը «հողակոյար» չէ, ոչ էլ «փոքր լեռան», այլ «ցածրադիր սար. սարահարթ», այլև այն, որ *կոնդ* բառը հայերենի շարք բարբառներում նշանակում է «բլուր» (հմմտ. Մուշ, Ալաշկերտ և այլն)²¹:

Եւ քանի որ գերեզմանը այլ բան չէ, քան հողաթումբ, այսինքն՝ հարթ մակերեսից ինչ-որ չափով բարձր հարված, ուստի այն կարող էր դիպել իբրև *կոնդ* բառի իմաստի արտահայտիչ: Ըստ այսմ «Բառգրքում» հիշյալ բառը բացառվում է իբրև «գերեզման»:

11. *Յաւան* «արտաբերող» բառը քննական բնագրում նշվում է առանց ձևագրական պարբերությունների և ծանոթագրությունների («Բառգիրք» 1975, էջ 227): Ամալյանը հետագայում եւս չի անդրադառնում այս բառին (Ամալյան 2007):

Բառը չենք գտնում «Արմարական բառարանում», ինչպես նաև «Ստուգաբանական բառարանում» (Աճառյան 1977, էջ 390, Ջահուկյան 2010): Լ. Նովիանինյանն ունի հետևյալ դիտարկումը. «Յաւան «արտաբերող»: Իրան. *havan* «կանչել»-ը թերևս թույլ է փայլա կապ պնդել յաւանի հետ»²²:

Նկատելի է նաև, որ իմաստը՝ «արտաբերող», որն այլ բան չէ, քան ձայնական՝ հնչական գործողություն կատարող (*nomen agentis*), կարելի է կարծել, որ բառի արմատն է *au*, որ սկզբում ունի *j* հավելված (ածանց), այլև *-an* վերջածանց (ածականական, ավյալ դեպքում՝ դերբայական արժեքով՝ «ձայն հանող, ձայնող՝ կանչող»): Նայերենում *au* արմատը բնիկ է [*h*ե. **aus-//us-* (**ju-es*) «լուսավորել. լույս փայլ». հմմտ. հինդկ. *uśāh* «արշալույս», հուն. հոմ. *ήώς* «առավոտյան արշալույս», լատ. *auro* «արշալույս և այլն»²³, նշանակում է՝ 1. բուն իմաստով՝ *առաւարտ* «օրվա սկիզբ», 2. փոխաբերաբար՝ *աւերել* «(բարի) լուր փայլ», *աւերիք* «(բարի) լուր», 3. բացարձակ իմաստով՝ *յաւեր* «միշտ՝ անսկիզբ և անվերջ» և այլն: Երկրորդ իմաստն առնչում է ձայնական գործողությանը՝ «լույս է առաջ բերում, բարին՝ իբրև լույս ավելվում է». հմմտ. «Արդ բարիք է արեգակն և բնութեամբ գեղեցիկ» (Եզնիկ Կողբացի). «Առաւօր լուսոյ, արեգակն արդար» (Ներսէս Շնորհալի): Ըստ այսմ, կարծում ենք, որ *յաւան* բառը «արտաբերող» իմաստով նշանակում է այն անձը, որը «բարի մի բան՝ լույս, լուր է փայլա, ազդարարում, արտաբերում է»²⁴:

12. *Նիւնիք* «ունենմ» («Բառգիրք» 1975, էջ 13): «Արմարականը» և «Ստուգաբանականը»

21 «Բառգրքի» *կոնդ* «գերեզման» բառը չենք գտնում Գ. Ջահուկյանի «Նայոց լեզվի պարմության» (Երևան, 1987) ցանկում, ինչպես նաև «Նայերեն ստուգաբանական բառարանում» (Երևան, 2010, էջ 419):

22 Լ. Նովիանինյան, Բառարանական նկարագրումներ «Բառգիրք հայոց»-ի մեջ փեղ գրած մի քանի բառերի վերաբերյալ, էջ 217:

23 Հմմտ. Գ. Գամկրելիզե, Ե. Բ. Իվանով, Նշվ. աշխ., էջ 223, 229: Գ. Ջահուկյան, Նիւնի հայերենի վերջածանցների ծագումը. «Դարմա-բանասիրական հանդես», 1994, թ. 1-2, էջ 57:

24 Այս արմատից է, հավանաբար, նաև հայերեն երգի «Յաւան-յաւան» անվանումը՝ իբրև «լուսի» բարոյ կանչ, ձայն:

բառարանը» չունեն այս բառը (Աճառյան 1977, Ջահուկյան 2010): Կարծում ենք, որ բառի բացատրությունը միանգամայն սպույզ է, ուստի մնում է պարզաբանել *նիւնիք* ձևը՝ որպես այդպիսին:

Այս դեպքում ունենք ոչ թե բառ, այլ բառաձև, այն է՝ *խմն* դերանվան ներգոյականի ձևը՝ լսարինաբան հայերենի համակարգում: Նման ձևերը, ինչ խոսք, գալիս են առանձին ձևազերծից, որոնք գրվելիս են եղել այն ժամանակաշրջանում, երբ մեզանում գործում էր լսարինաբան հայերենը, որպես լեզվական մի ուրույն վիճակ: Դա նկատելի է ոչ միայն որոշ բառաձևերի (օրինակ՝ *նիւնիք*), այլև վերջիններիս մեկնություններում, նաև ծանոթագրությունների մեջ և այլն: Այսպես, «Բառգրքի» էջ 12-ի փողարակի ծանոթագրության մեջ նշվում է՝ «կղզի է *նեք* ծովում Վասպուրականում», որ քննական բնագրում, իրավամբ, ուղղված է «կղզի է *ընդ* ծովում Վասպուրականում»: Սա նշանակում է, որ լսարինաբան *նեք* նախդիրը (տարբերակ՝ *ըն, ն-*) փոխարինված է բուն գրաբարյան *ընդ*-ով: Այնպես, որ այս քննական բնագիրը եւս գերծ չի մնացել նման արհեստական ձևերից:

Ըստ այսմ *նիւնիք* «ինչ-որ բանում, մի բանի մեջ» (քննական բնագրում՝ «ումնմն») բառաձևը այլ բան չէ, քան *խմն* անորոշ դերանվան լսարինաբան կազմությամբ ներգոյական հորովի ձև (*ն-նիւնիք*), որն էլ «Բառգրքում» բացատրված է *ումն* անորոշ դերանվան *ումնմն* «ինչ-որ մեկին» ձևով²⁵:

13. *Փասքուս* «շարախոս», փողարակին չի բերվում գրչագրական որևէ տարբերակ, իսկ ծանոթագրության բաժնում նշվում է հետևյալը. «NN 3468, 533 և այլ ձևազերծում՝ «փասքուս, շոքումք, կամ քսու, կամ խոռվարար»» («Բառգիրք» 1975, 324, 440): Բառի մեջ *քսու* բաղադրիչի առանձնացումը մակերեսային մոտեցման արդյունք է, պարունակում է կեղծ սպուգաբանության տարր, այսինքն՝ այն բացատրվում է իբրև «քսու, քսամնելի մի բան»: Այս մոտեցումն անցել է ոչ միայն «Նոր հայկազյան բառարանին», այլև հետագա ուսումնասիրություններին:

Նախ՝ «Նոր հայկազյան բառարանն» ունի ոչ միայն *փասքուս* («քուս և փասս մասերից, առաջինից՝ *քսու*, երկրորդից՝ *քամբաս*», համապատասխան հուն. *փսիթեքոս*, այլև *ֆասքոս*) «շաղակրար, շաղփաղփ, ընդվայրաբան, քրթմնջող, անդուռն բերան, առ ունկն ճառ ցճանձրոյթ՝ հանդերձ բամբասանօք» (որից՝ *փսփսացող*), այլ նաև *փասքսկն* «շաղփաղփել, շարախոսությամբ աշխարհ առնել, բամբասել», ընդ որում բերվում են բնագրային վկայություններ դասական և ուշ շրջանի մարենագրությունից («Նոր բառգիրք հայկազյան լեզուի», 1837, էջ 955-956): Բառի նման բաղադրիչների առանձնացումը, վերջիններիս իմաստների մարմանաշումը, հունարեն համարժեքներ բերելը, բնագրային փոխարինումը հասարակելը առհասարակ ամուր կովան են դառնում բառի մեկնության հարցում:

Այնուհետև՝ հետագա աշխատանքներում այս մոտեցումը լիովին պահպանվում է, ուստի բառի ծագումը մինչև այժմ մնում է անհայտ: Ըստ Աճառյանի՝ «քսու, բամբասող»՝ անհայտ ծագման բառ, «կազմում է *փասս* և *քսու* բառերի բարդությամբ, առաջինը անձանօք է, երկրորդը *քսու, քսել* բառերի արմատն է» (Աճառյան 1979, էջ 484): «Սպուգաբանական

25 Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Նամբարձումյան, նշվ. աշխ., էջ 272-277, 285:

բառարանում» նշվում է. «*Փասքուս* «բամբասող, զագրախոս»: Կազմված է անձանոթ *փաս-* արմարից և *քուս* «քսու» բառից (տե՛ս): Աճ. ՆԱԲ 4, 484» (Ջահուկյան 2010, էջ 759):

Կարծում ենք, որ *փասքուս* բառն ունի ոչ թե բաղադրյալ, այլ պարզ կազմություն, և նախնական իմաստն էլ չի կարող լինել այն, որ դուրս են բերում «Նոր հայկազյան բառարանի» հեղինակները՝ հիմնվելով բնագրերի առկա (որոշակի) իմաստների վրա, որոնք կարող են ավելի ուշ շրջանի լինել, և որոնց այդ հարցում հեղեղում են հեղափոխական ուսումնասիրողները:

Նկարի ունենալով սպուգաբանության բնագավառում նորագույն ուսումնասիրությունների փվյալները՝ գտնում ենք, որ բառը հայերենում բնիկ է, ծագում է հն. **pōsk-ei//*psk-ont* փարբերակային արմարից. հմմտ. խեթ. *pašku-zi* «ժխարել, մերժել. զանց առնել. հեռացնել», լուվ. *[pa-aš]-ku-ti* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.), *pa-aš-ku-lua-an-zi* (ներգործ. ներկ. հոգն. 3-րդ դ.) «նույնը» և այլն, հլուվ. *pasku-* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.) «բաց թողնել, արհամարհել. բանի տեղ չդնել. քամահրել» և այլն, որոնք հանգում են խեթ. *pāš-ki-/paš-ki-* *[pa-aš-ka-aḫ-ḫi, pa-aš-ga-mi]* (ներգործ. ներկ. հոգն. 1-ին դ.), *pa-aš-ki, pa-aš-ki-ez-zi* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.) «պինդ՝ ամուր նստել. կապել՝ ամրացնել. սերմնել՝ ցանել. կարգի բերել և այլն» ընդհանուր արմարին, իսկ առհասարակ այս խմբի լեզուների համար վերականգնվում է հին անսպ. **pask^h*- արմարը: Նկատենք նաև, որ իմաստի տեսակետից հայերենին առավել մոտ է *pasku-* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.) «բաց թողնել, արհամարհել. բանի տեղ չդնել. քամահրել» արմարը²⁶:

26 Ի դեպ՝ Ջահուկյանը, հենվելով Է. Լարոշի փվյալների վրա, հարցականով զուգահեռ է անցկացնում հայ. *Պասքում* անձնանվան և խեթ. *Pašku-lua-* դիցանվան միջև՝ վկայակոչելով նաև խեթ. *pašku-luḫi* «անուշադրության մարմնել, արհամարհել», այլև խեթ. *paš-* «ամրացնել» ձևերը (Ջահուկյան 1987, էջ 338):